



Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2003թ. երկրորդ եռամսյակում /վերլուծություն/

2003թ. երկրորդ եռամսյակում, հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել են 16615 գործարքներ, որոնք առաջին եռամսյակի համեմատ աճել են 28.4%-ով, իսկ 2002թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 16.9%-ով: 2003թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2003թ. երկրորդ եռամսյակում, անշարժ գույքի նկատմամբ իրականացված 7373 օտարման գործարքների 91.9%-ը կազմել են առուվաճառքները, 7.6%-ը նվիրատվությունները և 0.5%-ը փոխանակությունները: Անշարժ գույքի օտարման գործարքների 48.6%-ը արձանագրվել է Երևան քաղաքում և 50.0%-ը՝ բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ:

2003թ. երկրորդ եռամսյակում, առաջին եռամսյակի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքների քանակն աճել է 18.2%-ով, իսկ 2002թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 12.4%-ով: 2003թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում անշարժ գույքի 3263 առուվաճառքի գործարքների 68.0%-ը արձանագրվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևանում, 2003թ. առաջին եռամսյակի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 36.5%-ով, իսկ 2002թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 12.6%-ով:

2003թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ. երկրորդ եռամսյակ /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլարով/		
		երկրորդ եռամսյակ 2003թ.	առաջին եռամսյակ 2003թ.	երկրորդ եռամսյակ 2002թ.
Կենտրոն	200.0-970.0	382.8	356.0	257.0
Արաբկիր	150.0-550.0	268.5	247.0	159.7
Քանաքեռ-Զեյթուն	100.0-330.0	161.2	141.4	95.3
Նոր-Նորք	90.0-240.0	127.8	122.5	94.0
Ավան	90.0-190.0	124.4	112.3	85.0
Էրեբունի	80.0-300.0	138.0	127.4	85.7
Շենգավիթ	80.0-250.0	135.0	124.7	89.7
Դավթաշեն	100.0-250.0	161.2	137.0	92.3
Աջափնյակ	80.0-220.0	136.0	121.4	83.0
Մալաթիա-Սեբաստիա	90.0-240.0	135.4	122.4	85.7
Նուբարաշեն	40.0-100.0	65.8	64.5	40.0
Երևան	40.0-970.0	166.9	152.4	106.1

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. երկրորդ եռամսյակում, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ շինության շուկայական միջին գները, 2003թ. առաջին եռամսյակի համեմատ աճել են 9.5%-ով, իսկ 2002թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 57.3%-ով:

2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում գրանցված բազմաբնակարան շենքերի բնակարանների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն աճման միտում:

2003թ. երկրորդ եռամսյակում մարզերում, բացառությամբ Երևանը, վաճառվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 1077 բնակարաններ, որոնց քանակն առաջին եռամսյակի համեմատ աճել է 9.0%-ով, իսկ 2002թ. երկրորդ եռամսյակի համեմատ նվազել՝ 9.6%-ով:

2003թ. երկրորդ եռամսյակում ըստ հանրապետության մարզերի քաղաքների, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Մարզեր	Քաղաքներ	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական նվազագույն և առավելագույն գները 2003թ.երկրորդ եռամսյակ /ԱՄՆ դոլար/	Բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների 1քմ մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները /ԱՄՆ դոլար/		
			երկրորդ եռամսյակ 2003թ.	առաջին եռամսյակ 2003թ.	երկրորդ եռամսյակ 2002թ.
Արագածոտն	Աշտարակ	22.0-95.0	62.2	60.8	56.6
	Ապարան	18.0-38.0	27.1	26.8	25.5
	Թալին	18.0-38.0	24.9	23.5	20.9
Արարատ	Արտաշատ	22.0-85.0	54.1	52.6	51.9
	Մասիս	20.0-85.0	54.2	53.5	48.3
	Վեդի	20.0-45.0	31.4	30.0	28.7
	Արարատ	22.0-45.0	31.4	31.0	26.9
Արմավիր	Վաղարշապատ	35.0-105.0	83.6	76.5	71.4
	Արմավիր	21.0-58.0	45.3	42.7	41.4
	Մեծամոր	17.0-50.0	30.5	30.4	28.4
Գեղարքունիք	Սևան	20.0-50.0	30.5	30.2	29.3
	Գավառ	20.0-45.0	30.1	29.2	29.0
	Մարտունի	18.0-35.0	29.3	28.5	27.8
	Վարդենիս	12.0-21.0	17.0	16.8	15.9
Լոռի	Վանաձոր	30.0-85.0	60.5	59.5	56.0
	Ստեփանավան	20.0-45.0	33.0	30.0	27.2
	Սյիտակ	17.0-33.0	23.7	23.1	21.4
	Այվազ	17.0-40.0	25.3	24.7	22.1
Կոտայք	Տաշիր	15.0-26.0	19.2	18.5	17.8
	Արուսյան	40.0-100.0	82.6	78.0	76.3
	Նոր Հաճն	35.0-75.0	51.6	50.4	50.0
	Բյուրեղավան	17.0-48.0	35.1	34.5	31.8
	Եղվարդ	28.0-55.0	40.2	39.2	35.6
	Հրազդան	18.0-45.0	30.4	29.4	27.1
	Ծաղկաձոր	22.0-95.0	75.2	73.9	71.8
Չարենցավան	13.0-55.0	30.7	30.0	26.5	
Շիրակ	Գյումրի	30.0-97.0	69.7	63.3	60.5
	Արթիկ	17.0-38.0	25.1	24.5	22.4
	Մարալիկ	15.0-45.0	23.4	22.8	20.3
Սյունիք	Գորիս	21.0-45.0	29.5	28.3	26.1
	Կապան	18.0-55.0	28.8	27.8	25.2
	Միսիան	17.0-57.0	27.4	26.9	22.9
	Մեղրի	18.0-38.0	24.8	23.5	20.6
	Քաջարան	15.0-30.0	18.2	17.1	13.9
Վայոց Ձոր	Վայք	15.0-48.0	35.1	34.2	30.8
	Եղեգնաձոր	20.0-58.0	46.5	46.3	43.3
	Զեյթուն	20.0-55.0	40.8	39.0	37.5

Տավուշ	Դիլիջան	15.0-55.0	36.0	35.7	31.3
	Իջևան	23.0-50.0	40.3	39.7	38.0
	Բերդ	15.0-45.0	29.0	28.0	26.4
	Նոյեմբերյան	15.0-45.0	26.6	26.0	24.3

2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների միջին գների եռամսյակային աճը կազմել է 3.4%, իսկ տարեկան աճը՝ 10.7%

2003թ. երկրորդ եռամսյակում, մարզերում արձանագրվել են անհատական բնակելի տների 1034 առուվաճառքների գործարքներ, այդ թվում Երևան քաղաքում՝ 288, մյուս մարզերում միասին վերցրած՝ 746: 2003թ. առաջին եռամսյակի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 14.0%-ով, այդ թվում,

Երևան քաղաքում՝ 23.6%-ով, իսկ մյուս մարզերում, միասին վերցրած՝ 10.7%-ով, իսկ 2002թ. երկրորդ եռամսյակի համեմատ առանձնատների առուվաճառքի գործարքների քանակն աճել է՝ 24.6%-ով, ընդ որում Երևանում՝ 23.6%-ով, մյուս մարզերում միասին վերցրած՝ 25.0%-ով: Ընդ որում 2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում գրանցված առանձնատների օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն կայունացման միտում:

Երևան քաղաքի համայնքներում 2003թ. երկրորդ եռամսյակում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները և նրանց փոփոխման սահմանները.

Համայնք	Շինության 250.0 քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. երկրորդ եռամսյակում	Շինության 250.0քմ և տնամերձի 400.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
		երկրորդ եռամսյակ 2003թ.	առաջին եռամսյակ 2003թ.	երկրորդ եռամսյակ
Կենտրոն	210.0-990.0	386.0	358.3	264.3
Արաբկիր	160.0-580.0	271.3	249.7	163.7
Քանաքեռ-Զեյթուն	110.0-360.0	162.7	143.3	98.0
Նորք-Մարաշ	185.0-640.0	289.7	279.7	214.0
Ավան	95.0-200.0	126.0	114.0	87.8
Էրեբունի	95.0-320.0	139.3	129.0	97.7
Շենգավիթ	85.0-260.0	136.0	126.3	90.3
Դավթաշեն	105.0-260.0	162.3	138.3	93.0
Աջափնյակ	85.0-230.0	138.0	123.0	89.0
Մալաթիա-Սեբաստիա	95.0-250.0	136.7	124.3	91.3
Նուբարաշեն	55.0-110.0	68.0	67.1	42.7
Միջինը Երևանում	55.0-990.0	183.3	168.5	121.1

Կենտրոն համայնքի տվյալներում հյուսիսային պողոտայում ձևավորված գներն ընդգրկված չեն:

Գնային փոփոխությունների ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ Երևան քաղաքում 2003թ. երկրորդ եռամսյակում, անհատական

բնակելի տների շուկայական միջին գները առաջին եռամսյակի համեմատ աճել են 8.8%-ով, իսկ 2002թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 51.4%-ով:

Մյուս մարզերի որոշ քաղաքներում անհատական բնակելի տների առուվաճառքների և ռիելթորական գործակալություններում առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական գները.

Մարզեր	Քաղաքներ	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան նվազագույն և առավելագույն գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը 2003թ. երկրորդ եռամսյակ /ԱՄՆ դոլար/	Շինության 200.0քմ և տնամերձի 1000.0քմ միջին մակերեսներով առանձնատան միջին շուկայական գները, հաշվարկված 1քմ շինության մակերեսով, ներառյալ տնամերձի միավորի գինը /ԱՄՆ դոլար/		
			2003թ. երկրորդ եռամսյակ	2003թ. առաջին եռամսյակ	2002թ. երկրորդ եռամսյակ
Արագածոտն	Աշտարակ	35.0-100.0	82.2	80.2	74.9
	Ապարան	20.0-45.0	38.6	36.9	34.5
	Թալին	15.0-35.0	28.0	27.0	23.1
Արարատ	Արտաշատ	28.0-80.0	61.5	60.5	56.0
	Մասիս	27.0-80.0	62.3	60.5	58.7
	Վեդի	25.0-60.0	36.1	35.0	34.5
	Արարատ	25.0-60.0	37.2	34.7	34.2
Արմավիր	Վաղարշապատ	50.0-110.0	88.5	78.2	74.8
	Արմավիր	35.0-90.0	52.0	49.2	47.2
Գեղարքունիք	Սևան	25.0-60.0	36.3	35.5	33.5
	Գավառ	25.0-65.0	39.7	38.4	36.9
	Մարտունի	20.0-55.0	33.6	32.9	30.7
	Վարդենիս	15.0-45.0	21.0	19.9	19.0
Լոռի	Վանաձոր	35.0-90.0	67.7	66.4	63.8
	Ստեփանավան	20.0-50.0	33.1	31.9	31.7
	Սյիտակ	17.0-50.0	24.0	23.9	22.0
	Ալավերդի	18.0-50.0	25.8	25.8	22.9
	Տաշիր	15.0-30.0	19.7	19.0	18.4
Կոտայք	Աբովյան	40.0-110.0	91.6	89.1	86.7
	Նոր Հաճն	35.0-80.0	54.0	52.7	50.1
	Բյուրեղավան	15.0-50.0	38.1	36.8	32.9
	Եղվարդ	23.0-70.0	47.0	45.5	42.6
	Հրազդան	25.0-65.0	39.7	38.4	36.1
	Ծաղկաձոր	45.0-110.0	84.7	84.0	81.6
	Չարենցավան	25.0-50.0	33.1	32.7	28.9
Շիրակ	Գյումրի	40.0-110.0	89.6	86.4	85.0
	Արթիկ	18.0-55.0	28.4	26.8	24.5
	Մարալիկ	15.0-45.0	23.8	23.3	21.3
Սյունիք	Գորիս	22.0-65.0	31.3	30.5	26.9
	Կապան	25.0-55.0	30.8	29.4	27.4
	Միսիան	18.0-50.0	28.3	27.2	25.0
	Մեղրի	18.0-40.0	28.1	27.0	23.3
	Քաջարան	15.0-30.0	19.1	17.9	15.9
Վայոց Ձոր	Վայք	19.0-60.0	36.8	35.4	31.7
	Եղեգնաձոր	20.0-65.0	48.9	47.6	46.2

	Ջերմուկ	25.0-60.0	42.9	41.4	38.6
Տավուշ	Դիլիջան	20.0-60.0	39.0	38.2	35.9
	Իջևան	30.0-70.0	40.9	39.9	39.5
	Բերդ	20.0-50.0	30.6	30.0	26.8
	Նոյեմբերյան	20.0-50.0	30.6	30.0	26.8

2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շուկայական միջին գների եռամսյակային աճը կազմել է 3.5%, իսկ տարեկան աճը՝ 10.0% :

2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հողերի օտարման 1520 գործարքներ /675.29 հա ընդհանուր մակերեսով, այդ թվում Երևան քաղաքում՝ 48.44 հա/: Հողի օտարման 744 գործարքներն /585.20 հա ընդհանուր մակերեսով/ արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողի նկատմամբ: Հողերի նկատմամբ իրականացված օտարման գործարքներից 1483-ը հանդիսացել են առուվաճառք, 31-ը՝ նվիրատվության և 6-ը՝ փոխանակման գործարքներ: Հողերի առուվաճառքի 48 գործարքներում /3.2%/, որպես գնորդներ հանդես են եկել իրավաբանական անձիք:

2003թ. երկրորդ եռամսյակում, առաջին եռամսյակի համեմատ, հողերի առուվաճառքների քանակն աճել է 2.5%-ով, իսկ 2002թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 73.7%-ով: Հողերի առուվաճառքներից 170-ը իրականացվել են աճուրդների միջոցով, այդ թվում 60-ը՝ /7.67 հա/ Երևանում, իսկ 110-ը՝ /48.67 հա/ մյուս մարզերում: Աճուրդային կարգով վաճառված հողերից 12 միավորը /38.47 հա/ հանդիսացել են գյուղատնտեսական, 141-ը /11.85 հա/ բնակելի կառուցապատման /տնամերձ/, 16-ը /5.25 հա/ հասարակական կառուցապատման և 1-ը՝ /0.77 հա, Կոտայքի մարզում/ արդյունաբերական օբյեկտների:

2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում գրանցված հողերի օտարման և առուվաճառքի գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկաներն ունեն նվազման միտում:

Ստորև ներկայացվել է 2003թ. երկրորդ եռամսյակում մարզերում հողերի նկատմամբ գրանցված առուվաճառքի գործարքների քանակական և որակական տվյալների բաշխվածությունը.

ՄԱՐԶԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ	Պետական սեփականություն հանդիսացող						Մասնավոր սեփականություն հանդիսացող					
	գյուղատնտես. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր				գյուղատնտես. նշանակության հողերի		Բնակավայրերի հողեր			
			բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի				բնակելի կառուցապատ. /տնամերձ/ հողերի		հասարակական կառուցապատ. հողերի	
	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/	Քանակը	Մակերեսը /հա/
Երևան	0	0.00	80	4.52	69	19.84	0	0.00	134	11.26	34	9.90
Արագածոտն	0	0.00	1	0.10	0	0.00	86	44.91	34	3.08	0	0.00
Արարատ	5	32.30	55	5.76	2	0.04	190	62.53	81	7.11	4	0.11
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	147	161.27	45	4.13	4	0.30
Գեղարքունիք	0	0.00	0	0.00	0	0.00	22	103.77	6	0.81	0	0.00
Լոռի	0	0.00	0	0.00	0	0.00	31	25.07	5	0.44	0	0.00
Կոտայք	6	5.17	39	3.50	0	0.00	144	48.45	124	11.69	0	0.00
Շիրակ	0	0.00	1	0.05	0	0.00	58	70.57	16	0.79	4	0.08

Սյունիք	1	1.00	0	0.00	0	0.00	10	8.43	4	0.30	0	0.00
Վայոց Ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	20	13.22	1	0.07	1	0.50
Տավուշ	0	0.00	0	0.00	1	0.06	4	2.16	3	0.18	1	0.01
Ընդամենը	12	38.47	176	13.93	72	19.94	712	540.38	453	39.86	48	10.90

2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են հողերի 1483 առուվաճառքի գործարքներ, որից 724-ը գյուղատնտեսական, 752-ը՝ բնակավայրերի, 7-ը՝ արդյունաբերական օբյեկտների:

2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում վաճառված 7 միավոր արդյունաբերական օբյեկտների հողերից 1-ական միավոր գրանցվել են /0.90 հա/ Արարատի, /0.77 հա/ Կոտայքի /աճուրդ/, /0.04 հա/ Տավուշի մարզերում և 4 միավորը՝ /2.09 հա/ Երևանում: 2003թ երկրորդ եռամսյակում Երևանում գրանցվել են հողերի վարձակալության իրավունքի վաճառքի 3 գործարքներ:

2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում արձանագրվել են գյուղատնտեսական նշանակության հողերի առուվաճառքների 724, այդ թվում աճուրդ-վաճառքների 12 և դատարանի վճռով 8 /վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն/ գործարքներ, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1հա մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի անվանումը /նախկին շրջան/	Պետական սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսատղ գյուղ.նշ. հողերի առուվաճառքների				
	Քանակը /հատ/	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը /հատ/	Մակերեսը /հա/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1հա մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ						76	32.49	840.0	7600.0	2330.0
Ապարան						5	2.47	130.0	500.0	295.0
Թալին						1	1.21	200.0	1680.0	350.0
Ծաղկահովիտ						4	8.75	170.0	2100.0	290.0
Արարատի մարզ										
Մասիս						26	8.44	400.0	3100.0	1000.0
Վեդի						54	22.52	680.0	7200.0	1140.0
Արտաշատ	5	32.30	130.0	557.0	300.0	110	31.56	1040.0	6060.0	2040.0
Արմավիրի մարզ										
Վաղարշապատ						61	40.12	980.0	11150.0	2100.0
Արմավիր						38	27.31	650.0	4650.0	1230.0
Բաղրամյան						48	93.84	130.0	1000.0	385.0
Գեղարքունիքի մարզ										
Մարտունի								100.0	4000.0	475.0
Գավառ						12	4.04	420.0	1100.0	630.0
Սևան								100.0	1000.0	406.0
Վարդենիս						10	99.73	60.0	1180.0	230.0
Ճամբարակ								100.0	500.0	200.0
Լոռու մարզ										
Գուգարք						2	0.44	500.0	6000.0	1250.0
Ստեփանավան						8	7.94	180.0	4000.0	320.0
Ալավերդի						11	7.76	360.0	5500.0	780.0
Տաշիր						1	5.22	100.0	350.0	230.0
Սպիտակ						1	0.49	500.0	3300.0	1060.0

Կոտայքի մարզ										
Աբովյան	1	0.17	668.0	668.0	668.0	68	15.69	520.0	10100.0	3550.0
Եղվարդ	5	5.00	825.0	825.0	825.0	68	26.09	380.0	6100.0	2030.0
Հրազդան						8	6.67	250.0	4000.0	690.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						34	28.81	550.0	760.0	650.0
Ամասիա						4	14.40	80.0	525.0	212.0
Արթիկ						2	1.03	140.0	800.0	260.0
Աշոցք						3	2.03	60.0	210.0	130.0
Անի						15	24.30	240.0	800.0	280.0
Սյունիքի մարզ										
Սիսիան						8	7.82	90.0	1500.0	220.0
Գորիս								200.0	1600.0	408.0
Կապան	1	1.00	256.0	256.0	256.0			120.0	2000.0	330.0
Մեղրի						2	0.61	400.0	4240.0	925.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						20	13.22	260.0	4000.0	1095.0
Վայք								120.0	3400.0	380.0
Տավուշի մարզ										
Իջևան						2	0.36	530.0	4000.0	1150.0
Նոյեմբերյան						2	1.80	100.0	8340.0	700.0
Բերդ								100.0	2000.0	460.0

2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում, բացառությամբ Երևանը, արձանագրվել են բնակելի կառուցապատման հողերի 415 առուվաճառքի գործարքներ, այդ թվում՝ աճուրդ-վաճառքների 95, ուղղակի վաճառքի 1 և դատարանի վճռով 1 /վերջիններս ստորև ներկայացված աղյուսակում ընդգրկված չեն/, որոնց պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները 1000.0քմ մակերեսի հաշվարկով ներկայացվում են ստորև.

Տարածաշրջանի (նախկին շրջանի) անվանումը	Պետական սեփականություն հանդիսատղ բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի աճուրդ վաճառքների					Մասնավոր սեփականություն հանդիսատղ բնակելի կառուցապատման /տնամերձ/ հողերի առուվաճառքների				
	Քանակը /հատ/	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված պայմանագրային գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/			Քանակը /հատ/	Մակերեսը /քմ/	արդյունքում ձևավորված շուկայական գները 1000.0 քմ մակերեսի հաշվարկով /ԱՄՆ դոլար/		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	1	1000.0	44.3	44.3	44.3	33	28340.0	120.0	3800.0	2270.0
Ապարան						1	2500.0	120.0	670.0	310.0
Թալին								78.0	440.0	125.0
Ծաղկահովիտ								78.0	180.0	140.0
Արարատի մարզ										
Մասիս	32	32205	110.0	170.0	120.0	43	35010.0	280.0	3680.0	830.0
Վեդի						19	20100.0	115.0	1000.0	500.0
Արտաշատ	23	25400.0	152.0	340.0	210.0	19	15982.0	175.0	2460.0	650.0
Արմավիրի մարզ										
Վաղարշապատ						31	24499.0	280.0	3700.0	1300.0
Արմավիր						10	12036.0	180.0	2440.0	670.0
Բաղրամյան						4	4800.0	120.0	280.0	200.0
Գեղարքունիքի մարզ										
Մարտունի						3	2730.0	120.0	320.0	225.0
Գավառ						3	5324.0	180.0	1000.0	520.0

Սևան								120.0	280.0	210.0
Վարդենիս								78.0	180.0	120.0
Ճամբարակ								78.0	180.0	140.0
Լոռու մարզ										
Ստեփանավան						3	2551.90	78.0	340.0	140.0
Գուգարք						1	1020.0	78.0	3800.0	590.0
Սպիտակ								78.0	450.0	160.0
Ալավերդի								78.0	440.0	200.0
Տաշիր						1	840.0	78.0	180.0	130.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	20	16000.0	95.0	945.0	330.0	80	67394.0	180.0	4300.0	1520.0
Եղվարդ	19	19000.0	85.0	85.0	85.0	34	41857.0	180.0	3670.0	2020.0
Հրազդան						9	7155.0	180.0	4120.0	1320.0
Շիրակի մարզ										
Ախուրյան						16	7920.0	120.0	2500.0	430.0
Անի								120.0	430.0	190.0
Արթիկ								120.0	440.0	190.0
Աշոցք								78.0	120.0	110.0
Ամասիա								78.0	180.0	135.0
Սյունիքի մարզ										
Միսիան						2	2080.0	78.0	450.0	230.0
Գորիս						2	920.0	78.0	670.0	385.0
Կապան								78.0	1000.0	380.0
Մեղրի								78.0	450.0	230.0
Վայոց Ձորի մարզ										
Եղեգնաձոր						1	687.0	78.0	990.0	290.0
Վայք								78.0	1000.0	210.0
Տավուշի մարզ										
Իջևան						3	1810.0	78.0	1600.0	390.0
Լոյենբերյան								78.0	670.0	210.0
Բերդ								78.0	670.0	170.0

Պետք է նշել, որ հանրապետությունում 2003թ. երկրորդ եռամսյակում գրանցվել են նաև պետական սեփականություն հանդիսացող հողերի անհատույց տրամադրման 42, որից 39 գյուղատնտեսական նշանակության գործարքներ: Հողերի /0.27 հա բնակելի կառուցապատման /տնամերձ/, 65.88 հա գյուղատնտեսական նշանակության/ անհատույց տրամադրման 1 գործարք է գրանցվել Երևանում /0.10 հա/, 13-ը՝ Արարատի /4.96 հա/, 11-ը՝ Արմավիրի /33.00 հա/, 5-ը՝ Գեղարքունիքի /6.39 հա/, 6-ը՝ Շիրակի /19.43 հա/, 5-ը՝ Վայոց Ձորի /1.54 հա/ և 1-ը՝ Տավուշի /0.73 հա/ մարզերում:

2003թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1633 վարձակալության գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 9.8%-ը: Ընդ որում վարձակալության գործարքների 34.0%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից: 2003թ. առաջին եռամսյակի համեմատ անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակըն աճել է 45.9%-ով, իսկ 2002թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 1.6%-ով: 2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում վարձակալության գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի աճման միտում:

2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրանցվել են բազմաբնակարան բնակելի շենքերի 96 բնակարանների, 27 բնակելի տների, 347

հասարակական, 20 արտադրական նշանակության օբյեկտների, 4 ավտոտնակների և 1139 հողերի վարձակալության գործարքներ:

2003թ. երկրորդ եռամսյակում Երևան քաղաքում պետական սեփականություն հանդիսացող հողերի նկատմամբ գրանցված 380 վարձակալության գործարքների քանակները առաջին եռամսյակի համեմատ աճել են 59.7%-ով, իսկ 2002թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 2.0 անգամ:

Ընդհանուր առմամբ, 2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում վարձակալվել են 7279.88 հա ընդհանուր մակերեսով հողեր /83.16 հա Երևանում/: Մյուս մարզերում վարձակալված հողերից 7089.14 հա կազմում են գյուղատնտեսական /որից 637.99 հա նախկին պահուստային/, 16.64 հա բնակավայրերի, 0.15 հա տրանսպորտային, 90.79 հա արդյունաբերական օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հողեր են վարձակալվել Արարատի մարզում՝ 3562.53 հա, որից 3481.11 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել փոքր մակերեսով հողեր վարձակալվել են Տավուշի մարզում՝ 9.02 հա, որից 4.20 հա գյուղատնտեսական, 0.31 հա բնակավայրերի:

Համայնքների վարչական սահմաններից դուրս վարձակալվել են 4266.9 հա հողեր:

Ստորև ներկայացվում է 2003թ. երկրորդ եռամսյակում համայնքների վարչական սահմանների ներսում և վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործարքների տվյալների բաշխվածությունն ըստ մարզերի.

<i>Մարզի անվանումը</i>	<i>Համայնքների վարչական սահմաններից դուրս գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>		<i>Համայնքների վարչական սահմանների ներսում գտնվող գյուղատնտ. նշ. հողերի</i>	
	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>	<i>Վարձակալության գործարքների քանակները /հատ/</i>	<i>Վարձակալված հողերի մակերեսները /հա/</i>
Արագածոտն	5	699.00	56	361.63
Արարատ	11	2797.00	155	684.11
Արմավիր	0	0.00	25	329.50
Գեղարքունիք	5	650.9	112	796.18
Լոռի	0	0.00	13	20.98
Վոտայք	2	120.00	70	113.56
Շիրակ	0	0.00	33	412.16
Սյունիք	0	0.00	48	57.43
Վայոց Ձոր	0	0.00	31	42.49
Տավուշ	0	0.00	3	4.20
Ընդամենը	23	4266.9	546	2822.24

2003թ. երկրորդ եռամսյակում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1195 գրավադրման գործարքները կազմել են անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 7.2%-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակն առաջին եռամսյակի համեմատ աճել է 41.8%-ով, իսկ 2002թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 31.3%-ով: Ընդ որում գրավադրման գործարքների 40.9%-ը իրականացվել են իրավաբանական անձանց կողմից, իսկ գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

Գրավադրման գործարքներն առավելապես իրականացվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների /39.9%/, հասարակական նշանակության օբյեկտների /18.6%/, առանձնատների /11.8%/ և հողերի /23.8%/ նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 581 գրավադրման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակն առաջին եռամսյակի համեմատ աճել է 39.3%-ով, իսկ 2002թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 19.8%-ով:

2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետությունում գրավադրվել են 182.23 հա մակերեսով հողեր, որից 180.99 հա գյուղատնտեսական նշանակության: Առավել մեծ մակերեսով հողեր են գրավադրվել Արարատի մարզում՝ 120.92 հա, որից 120.13 գյուղատնտեսական նշանակության:

2003թ. երկրորդ եռամսյակում, հանրապետությունում արձանագրվել են հասարակական և արտադրական նշանակության օբյեկտների մասնավորեցման /ապապետականացման միջոցով/ համապատասխանաբար, 54 և 19 գործարքներ, որոնց ընդհանուր քանակը անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 0.4%: 2003թ. երկրորդ եռամսյակում հանրապետության մարզերում մասնավորեցման գործարքներից ծագող իրավունքների պետական գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի նվազման միտում:

2003թ. առաջին և 2002թ. երկրորդ եռամսյակների համեմատ, մասնավորեցման գործարքների քանակը նվազել է համապատասխանաբար 14.1%-ով և 34.2%-ով: 2003թ. երկրորդ եռամսյակում մասնավորեցման գործարքների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում՝ 24.7%:

2003թ. երկրորդ եռամսյակում, հանրապետությունում արձանագրվել են անշարժ գույքի սեփականության իրավունքի առաջնային գրանցումների 2304 գործարքներ, որոնց քանակն առաջին եռամսյակի համեմատ աճել է՝ 30.5%-ով, իսկ 2002թ. երկրորդ եռամսյակի համեմատ՝ 40.4%-ով: Առաջնային գրանցումների տեսակաբար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումներում կազմել է 13.9%: Քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում /40.0%/: Ընդ որում առաջնային գրանցումների քանակական փոփոխությունների դինամիկան ունի կայունացման միտում:

ԱԳԿՊԿ լրատվական ծառայություն